«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ <<Մակբայ>> թեմայի ուսուցումը VIII դասարանում նվազագույն չափորոշչային պահանջների ապահովմամբ:

ՀԵՂԻՆԱԿ Հեղինե Նվերի Պետրոսյան

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ 6-րդ խումբ, Հայոց լեզու և գրականություն

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն----------2

Գլուխ 1. Մակբայի գործարառական ոլորտները ----------4

Գլուխ 2. Մակբայի կազմությունը---------- --------11

Գլուխ 3. Մակբայի ուսուցումը ----------13

Եզրակացություն----------15

Օգտագործված գրականության ցանկ----------16

Ներածություն

Լեզվում կան բառեր, որոնք արտահայտում են գործողության (հատկանիշի) հատկանիշներ, օրինակ՝ հերոսաբար կռվել, դանդաղորեն քայլել, լիովին վստահել, անմիջապես օգնել, չափազանց դժվար:

Գործողության (հատկանիշի) հատկանիշներ ցույց տվող բառերը միավորվում են «մակբայ» խոսքի մասի շուրջ :

Մակբայ» թեման ուսուցանելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ծրագրում տրվում են մակբայի իմաստային, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները: «Մակբայ» թեման ուսուցանելիս պիտի կարևորենք հետևյալը . նախ այն, որ սա նյութական իմաստ արտահայտող վերջին խոսքի մասն է, և որպես այդպիսին միակ խոսքի մասն է, որ ընդհանրապես չի թեքվում: Շարահյուսության մեջ անպայման պետք է ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ մակբայները նախադասության մեջ դառնում են հիմնականում բայական անդամի և ածականով արտահայտված անդամի լրացում: Մակբայը հիմնականում լրացնում է բային և նախադասության մեջ ձևավորում է պարագա:

Մակբայը չթեքվող խոսքի մասերից միակն է, որը հանդես է գալիս որպես նախադասության անդամ, գերազանցապես լինում է պարագա:

Պարագա ձևավորվում է նաև գոյականի տարբեր հոլովներով, դերանուններով, դերբայներով, կապային կառույցներով, որոնք հաճախ շփոթ են ստեղծում նախադասության մեջ, և սովորողները չեն տարբերում մակբայը այլ խոսքի մասերից:

Հետազոտության մեջ առաջադրել ենք մեթոդներ այդ շփոթը վերացնելու համար: Սրանով էլ հենց պայմանավորված է թեմայի ընտրությունը և հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը՝ Ուսումնական նյութ դարձնելով մակբայի իմաստաքերականական հատկանիշները և կազմության ուսումնասիրումը դպրոցում՝ ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդների ու մեթոդական հնարների կիրառման ճանապարհով կարելի է մատչելի դարձնել «Մակբայ» թեման ու նպաստել թեմայի գործնական յուրացմանը, նյութի առավել տրամաբանված ըմբռնմանը, սովորողների մտածողության զարգացմանը, բանավոր և գրավոր խոսք կառուցելու հմտությունների մշակմանը:

Հետազոտության խնդիրները՝

- Մշակել ու փորձարկել ուսուցման նոր եղանակներ՝ որոշելու մակբայի դերը տարբեր խոսքի մասերի համակարգում:
- Դասակարգել մակբայի ուսուցման այնպիսի արդյունավետ մեթոդներ, որոնք կնպաստեն խոսքի մասերի գործընթացում սովորողների բառապաշարի հարստացմանը, բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը:
- Սահմանել մակբայի գործածությամբ կապակցված խոսք կառուցելու քայլերը՝ բառ-բառակապակցություն-նախադասություն-կապակցված խոսք շղթայում:
- Մշակել և փորձարկել թեմայի յուրացման արդյունավետությանը նպաստող վարժությունների համակարգ:
- Հանրակրթական 8-րդ դասարանում անցկացնել հետազոտական աշխատանք՝ մեթոդական համակարգի արդյունավետությունը ստուգելու համար:

Գլուխ 1

Մակբայի գործառական ոլորտները

Մակբայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս հատկանիշի հատկանիշ: Այս դեպքում առարկայի հատկանիշ են դիտվում ածականները, թվականները, բայը, հենց ինքը՝ մակբայը և հատկանիշի իմաստ ունեցող / լեզվական ըմբռնումով / որոշ գոյականներ: Մակբայը դրվելով այս բառերի վրա, այս կամ այն ձևով մասնավորում է նրանց իմաստը, օրինակ՝ **1. Ածական.**

Հարմար – շատ հարմար – առավել հարմար

Թույլ – արդեն թույլ – համարյա թույլ

2.Թվական.

Ճիշտ է թվականը կոնկրետ թվային հատկանիշ է նշում, սակայն խոսքի մեջ այդ կոնկրետությունն էլ կարող է որևէ կողմով մասնավորվել, օրինակ՝ երեքը կարող է ստանալ ճշգրտող մոտավորականության իմաստով լրացումներ՝

Համարյա երեք – ճիշտ երեք – աջից երրորդ

3.Բայ.

Բայը ավելի հաճախ է ստանում / անվանումը հենց կապված է բայի հետ՝ մակ+բայ /

Օրինակ՝ արագ գնալ, անընդհատ խոսել և այլն:

4. Մակբայ.

Մակբայը կարող է դրվել մեկ այլ մակբայի վրա, նշելով նրա աստիճանը կամ չափը:

Օրինակ՝ շատ արագ, խիստ հապշտապ:

5. Գոյական.

Որոշ գոյականներ ավելի շատ հատկանիշ են արտահայտում, բայց լեզվի առումով առարկայացված են ընկալվում՝

Օրինակ՝ պատանեկություն, խաղաղություն:

Սրանց մի մասի մեջ հատկանիշը ավելի շեշտված ընկալելիս կրելի է լրացնել մակբայով:

Օրինակ՝ ուշ աշուն, վաղ առավոտ, շտապ օգնություն:

Մակբայը իմաստային առումով ամենից մոտ է ածականին, քանի որ երկուսն էլ հատկանիշ են արտահայտում: Այս պատճառով խոսքի մեջ որոշ որակական ածականներ կատարում են մակբայի դեր, որոշ մակբայներ էլ՝ ածականլ դեր, ինչի պատճառով էլ առաջանում են որոշ բառերի խմբեր, որոնք միայն գործածությամբ են որոշվում, թե որ խոսքի մասին են պատկանում: Դրանցից են հատկապես չափի, գնահատողական, վերաբերմունքային բառերը:

Օրինակ՝ գեղեցիկ, լավ, վատ, հարմար, բարձր, ճիշտ, գծել:

Այսպիսի բառերի որոշումը միայն խոսքի մեջ է կատարվում, որի համար էլ դրանք երբեմն համարում են ***խոսքային համանուններ***:

Մակբայները իմաստով կապվում են նաև վերաբերականների հետ:

Վերաբերականը որպես խոսքի մաս առաջացել է մակբայի հիմքում: Այժմ որոշ բառեր համարվում են և՛ վերաբերական, և՛ մակբայ.

Օրինակ՝ համարյա, գոնե, առնվազն…

Մակբայը ծագել է տարբեր խոսքի մասերի ձևերից: Բուն մակբայները քիչ են, դրանք պարզ են.

Օրինակ՝ շատ, քիչ, մոտ, հեռու, վեր, …

Որոշ այսպիսի մակբայներ գործածվում են նաև այն բառերի արժեքով, որից ծագել են իրենք.

Օրինակ՝ մոտ է կանգնել – մակբայ,

մոտիցս եկար – գոյական

քաղաքին մոտ – ածական

Ավելի շատ են այն մակբայները, որոնք բաղադրյալ կազմություն ունեն՝ ածանցավոր են, բարդ են կամ կապակցություններ են:

Օրինակ՝ արտաքուստ, առաքել, մերթընդմերթ, փոքրիշատե, դարեր ի վեր…

Ըստ իմաստի մակբայները լինում են չորս տեսակ՝ ***տեղի, ժամանակի, ձևի, չափի:***

Օրինակ՝ ամենուրեք, ցած, հեռու, ներքև - տեղ են նծանակում,

վաղուց, դեռ, ուշ, հիմա, հնում – ժամանակ են նշում,

դանդաղ, չորեքթաթ, հապճեպ – ձև են նշում

բազմիցս, հաճախ, իսպառ, կրկին – չափ են նշում:

Կան մի շարք մակբայներ, որ իրենց բառային նշանակության մեջ համատեղում են մի քանի իմաստներ, հատկապես՝ ձևի, ժամանակի, չափի: Սրանք կոչվում են ընդհանրական մակբայներ.

Օրինակ՝ նորից, հանկարծ, մերթընդմերթ, անընդհատ, հաճախ…

Երբ նշված մակբայների հետ ժամանակ, չափ կամ ձև նշող որևէ այլ բառ կա, ապա դրանք ընկալվում են իրենց իմաստներից կոնկրետ մեկով:

Օրինակ՝ տեղ – տեղ մակբայը տեղի իմաստ ունի, բայց երբ գործածվում է այնպիսի նախադասության մեջ, որտեղ տեղի պարագան կոնկրետ նշված կա, ապա այն ընկալվում է իր մեկ ուրիշ՝ ձևի իմաստով:

Օրինակ՝ Այգում տեղ – տեղ գետինը կանաչել է:

Այս նախադասության մեջ ընկալվում է ձևի իմաստով:

Հանկարծ անսպասելի հարվածեց:

Այս նախադասության մեջ երկու մակբայներն էլ ընդհանրական իմաստ ունեն, երկուսն էլ ձև են նշում, բայց տարբեր իմաստային նրբերանգներով:

Առաջ բառը ըստ գործածության կարող է և՛ տեղ, և՛ ժամանակ ցույց տալ.

Օրինակ՝ Դժվարությամբ էին առաջ գնում: - տեղ է ցույց տալիս,

Իսկ՝ Առաջ այդպիսի բան չէինք տեսել: - ժամանակ է ցույց տալիս:

Այս բառը ընդհանրական է բազմիմաստ լինելու պատճառով:

Տեղի մակբայ

Տեղի մակբայը նշում է գործողության կատարման տեղը տարբեր հարաբերություններում. Այսպես՝

1. Ընդհանրական տեղ են նշում ամեն օր, ամենուրեք, ամեն տեղ մակբայները:

2. Որոշ մակբայներ ցույց են տալիս գործողության ուղղվածությունը որևէ կողմ՝ դուրս, ներս, վեր, վար, հեռու, մոտ և այլն: Այս մակբայների մեծ մասը ուղղություն նշող բայերի հետ կազմում են հարադրություն՝ ճշտելով շարժման ուղղությունը:

   Օրինակ՝ մոտ գալ, ներս ընկնել, դուրս նետվել ր այլն:

3. Որոշ մակբայներ նշում են ենթակայի կամ խնդրի դիմադիր կողմը՝ դեմ առ դեմ, դեմ հանդիման, դեմ ու դեմ և այլն:

   Օրինակ՝ Սուրիկը դեմ հանդիման հանդիպեց նրան:

4. Մի քանի մակբայներ ցույց են տալիս գործողության սկզբնական և վերջնական կետը միասնական: Սրանք հարադիր բարդություններ են, որոնց առաջին բառը կամ բացառական հոլովով է, կան դրա խոսակցական ձևը՝ տնից տուն, քաղաքից քաղաք, գյուղեգյուղ, տնետուն, բերնեբերան…: Սրանք կարող են ըմբռնվել նաև ձևի իմաստով:

   Օրինակ՝ Բերնեբերան շրջում էր լուրը:

   Թափառեցին քաղաքեքաղաք:

5. Ոնոշ մակբայներ էլ կազմվում են ***առ*** նախդիրով և նշում են ստույգ տեղ՝ մասնավորված.

   Օրինակ՝ տուն առ տուն, շարք առ շարք, դասարան առ դասարան և այլն:

   Սրանց մեջ էլ ձևը զգացվում է:

   Օրինակ՝ Անկյուն առ անկյուն ստուգեցի:

   Կոնկրետ իմաստը ճշտվում է խոսքի մեջ:

Ժամանակի մակբայ

Ժամանակի մակբայը ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը իմաստային տարբեր նրբերանգներով: Մակբայի ցույց տված ժամանակը էականորեն տարբերվում է քերականական ժամանակից: Բայական քերականական ժամանակը մասնիկներով կամ վերջավորություններով արտահայտվող ժամանակային իմաստ է, իսկ մակբայի արտահայտած ժամանակը բառիմաստ է, ոչ թե մասնիկի ժամանակը մեր ըմբռնմամբ զանազան դրսևորումներ ունի՝ անցյալ, ներկա, ապառնի, ակզբնակետ, անընդհատություն և այլն: Այս նրբիմաստներն էլ արտահայտվում են տարբեր խմբերի մակբայներով.

1. Ացյալ, ներկա և ապառնի ժամանակի իմաստ են արտահայտում՝ առաջ, նախկինում, հիմա, այժմ, արդեն, ներկայումս, հետո, ապա և այլն:
2. Ժամանակային սկզբնակետ են նշում՝ մանկուց, վաղուց, հնուց…

   Մանկուց լավն է տեսել:

3. Ժամանակային անընդհատություն, մշտատևություն են արտահայտում՝ հար, հավետ, միշտ, հավիտյան, ընդմիշտ, առհավետ և այլն:

   Միշտ հիշում եմ քեզ:

4. Մի քանի մակբայների մեջ էլ նշվում է ժամանակի ընդհատություն, որոշակի ժամանակայի պահեր՝ օր առ օր, մերթընդմերթ, ժամանակ առ ժամանակ, առժամանակ, օրըստօրե, ստեպ-ստեպ, պահ առ պահ, վայրկյան առ վայրկյան:
5. Մի քանի մակբայների մեջ ժամանակի իմաստը դրսևորվում է գործողության կատարելիության, աստիճանի իմաստով: Դրանք են՝ դեռ, արդեն, այլևս: ***Դեռը*** հիմնականում դրվում է բայի ժխտական ձևերի հետ / հաստատական ձևերի ժամանակ նշվում է գործողության դարձյալ չավարտված լինելը՝ դեռ չի եկել: /Իսկ եթե դրվում է հաստատական բայերի հետ, ցույց է տալիս գործողության չավարտված լինելը:
Արդեն մակբայը ցույց է տալիս գործողության ավարտված լինելը:
Օրինակ՝ Արդեն գարուն է եկել:
Այլևս-ը ժխտում է գործողության կատարվելը: Շատ ժամանակ զուգակցվում է ***երբեք*** *բառի հետ:* ***Այլևս*** – ը մի ժամանակ գործածվում էր դրական ձևերով:
6. Կան որոշ մակբայներ, որոնց մեջ ժամանակային իմաստը հավասարապես խառն է այլ իմաստների հետ. Միայն խոսքում կարելի է ստույգ ընկալել գործածված իմաստը: Դրանցից են՝ նորից դարձյալ, վերստին. Կրկին, անդադար, հանկարծ:
Նորից – նոև բառի բացառական հոլովն է
Կրկին – երկ – այսինքն երկրորդ անգամ
Դարձյալ – դառնալով. առնալով դերբայ
Որպես բառ սրանք ունենիրենց որոշակի, ուրույն իմաստը՝ ժամանակի իմաստը տարբեր երանգներով:

Ձևի մակբայ

Ձևի մակբայը նշում է գործողության, գործողություն կատարողի կամ գործողության առարկայի ձևը, վիճակը, դիրքը և այլն: Ընդհանուր անվանումն է **ձևի** մակբայ: Սրանք ունեն իմաստային տարբեր նրբերանգներ: Այսպես՝ *կամացուկ, դանդաղ, արագ, անսպասելի, ջերմորեն* և նման մակբայները նշում են բուն գործողության հատկանիշը:
Օրինակ՝ Արագ վազում էր: -վերաբերում է վազելուն:
Չորեքթաթ, բերանքսիվայր, հոտնկայս և նման մակբայները նշում են ենթակայի կամ խնդրի վիճակը, որը դրսևորվում է գործողություն կատարելիս:
Օրինակ՝ Նա *չորեքթաթ* մոտեցավ: - Նախադասության մեջ ընդգծվածը ոչ թե գործողության ձևն է ցույց տալիս, այլ ենթակայի վիճակն է նշում:
Որոշ մակբայներ էլ նշում են այնպիսի հատկանիշ, որը և՛ կատարողի կամ առարկայի, և՛ գործողության ձևն է ցույց տալիս: Այդպիսիք են՝ *մենակ, զույգ – զույգ, խումբ – խումբ…:*
Օրինակ՝ Սպաները *խումբ – խումբ* բացատրում էին հրահանգը *կետ առ կետ,* նորակոչիկներին՝ *մեկ – մեկ:*
Առաջին մակբայը վերաբերում է գործողություն կատարողին, նրանց հանդես գալու ձևն է, կարելի է փոխարինել *խմբովի* բառով: Երկրորդը նշում է գործողության կատարման ձևը, իսկ երրորդը վերաբերում է խնդրի հանդես գալու ձևին: Այսպիսով

նախադասության մեջ երեք վիճակ կարող է դրսևորվել՝ ենթակայի / սուբյեկտ /, գործողության կամ բայի և խնդրի / օբյեկտ/:

Կան նաև այնպիսի մակբայներ, որոնք գործողության և ենթակայի ներքին հատկանիշն են նշում: Այդպիսիք են՝ *բարեկամաբար, մտերմաբար, քաղաքավարի, խելացիորեն, համեստաբար* և այլն:

Ձևի մակբայերի մեջ երբեմն զգացվում է սահմանափակման իմաստ, այսինքն հատկանիշը վերաբերում է գործողության մի կողմին միայն: Այդպիսիք են հատկապես -*պես* և -*ուստ* ածանցներով կազմվածները: Սրանց մեջ կա նաև տեղի իմաստ՝ *բարոյապես, սոցիալապես, արտաքուստ, ներքուստ, ի վերուստ* և այլն:

Բարոյապես ազդեց դիմացինի վրա: - և՝ ձևն է, և՝ սահմանափակման իմաստը:

Որոշ ձևի մակբայներ արտահայտում են գործողության պարբերականության կոնկրետ թվի կամ դրա իմաստն ունեցող բառի միջոցով: Կազմվում են -***ակի, -իցս*** ածանցներով:

Օրինակ՝ քառակի, կրկնակի, բազմիցս, երիցս և այլն:

Ձևի մակբայները ունեն կազմության որոշ կաղապարային ձևեր: Դրանք արտահայտվում են ***-բար, -որեն, -ովի, -ացի, -ակի, -իցս, - գին*** և այլ ածանցներով՝ *զազանաբար, քնքշորեն, յուրովի…:*

Որոշ մակբայներ էլ իրենց մեջ պարունակում են ձևի, չափի, ժամանակի խառն իմաստներ՝ *հանկարծակի, անսպասելի, անդադար և այլն:*

Չափի մակբայ

Չափի մակբայները ցույց են տալիս գործողության հատկանիշի կատարման չափը:

Չափի մակբայը ունի զանազան նրբերանգներ, դրանցից են՝ *շատ, քիչ, ավելի, առավել, սակավ, պակաս, բոլորովին, ամենևին, համարյա, գրեթե* և այլն: Սրանցից *համարյա, գրեթե* կարող են ըմբռնվել նաև որպես վերաբերականներ: Որոշ մակբայներ կազմվու են հարադրությամբ՝ *կիսով չափ, փոքր ի շատե, փոքր-ինչ*: Մի շարք մակբայներ կարող են կրկնվել:

Ընդհանրական մակբայ

Սա մակբայի առանձին տեսակ չէ, այլ մի շարք մակբայների մեջ որպես բառային իմաստ համատեղվում են մի քանի նրբերանգներ: Երբ դրանք գործածվում են որոշակի իմաստ ունեցող մակբայների կողքին, դրանց մեջ զգացվում է իմաստներից որևէ մեկը.

Օրինակ՝ *Հանկարծ անսպասելի* ներս մտավ:

Եթե *անսպասելին* ընկալում ենք ձևի իմաստով, ապա *հանկարծը* ժամանակի իմաստ է ձեռք բերում: Այսպես առաջացել են մեկ բառի արժեքով կապակցություններ.

Օրինակ՝ *դարեր շարունակ, օրեր շարունակ, դեռ վաղուց, արդեն վաղուց…*

Ընդհանրական մակբայներից են՝ օրեցօր, դարեդար, հանկարծ, միանգամից, մերթ – մերթ…:

Գլուխ 2

Մակբայի կազմությունը

Ըստ կազմության մակբայները լինում են **պարզ, ածանցավոր, բարդ:**

Պարզ մակբայները քիչ են՝ *դեռ, նոր, վեր, վար, բարձր, ցածր, շատ, քիչ, արագ, շուտ, դանդաղ, հար, հաճախ…:* Սրանց մի մասը առաջացել է գոյականից կամ ածականից, դրա համար էլ խոսքի մեջ նրանք կատարում են տարբեր խոսքի մասերի դեր:

Օրինակ՝ *նոր* հագուստ – ածական

Նոր եմ վերադարձել – մակբայ

Վեր նայեց – մակբայ

Խելքից *վեր* գործ – կապ

Առաջ մակբայը, որ հիմա պարզ է գիտակցվում, կազմված է առ+աջ բաղադրիչներից, իր մեջ համատեղում է տեղի և ժամանակի իմաստներ: Մի շարք մակբայների մեջ որոշ բաղադրիչներ այլևս չեն գիտակցվում և պարզ բառի արժեք ունեն՝ վաղուց նորից, մանկուց, սակավ, արդեն և այլն:

Մակբայները ավելի շատ կազմվում են ածանցներով: Մակբայակերտ ածանցներն են.

- *աբար, - ապես, - որեն, - ովին, - գին, - ացի* և այլն:

Օրինակ՝ *բերանացի, գալարաբար, բացառապես, մտերմորեն, կամովին, քառակի, բազմիցս, երիցս, ջերմագին:*

Մի շարք մակբայներ առաջացել են քերականական ձևերից կամ կազմվել են նկարագրական եղանակով:

Քերականական ձևերից կազմված մակբայներն առաջացել են գոյականի և բայի թեքման ձևերից:

1. **Բացառական հոլովից** առաջացած մակբայներ՝ ներքուստ, արտաքուստ, վերուստ, վաղուց, հնուց, նորից, միանգամից, մեկից, մեկեն և այլն:

2. **Գործիական հոլովից** կազմված մակբայներ՝ դիտմամբ, մասամբ, անձամբ, պատահմամբ, սակավ, բնավ, հազիվ, օրոք:

3. **Ներգոյական հոլովից** առաջացած մակբայներ՝ առաջիկայում, ներկայումս, հետագայում, հնում, հիմնականում:

4. **Հայցական հոլովից** առաջացած մակբայներ՝ ցմահ, ցարդ, ներս, դուրս, ակյանս, ցայսօր:

5. **Բայի խոնարհման կամ դերբայական ձևերից** առաջացած մակբայներ՝ դարձյալ համարյա, գրեթե:

Նկարագրական մակբայներն առաջացել ենվերլուծական եղանակով, դրանք կիսակայուն կապակցություններ են, ունեն մակբայական կիրառություն, հիմնականում երկբաղադրիչ են / մասամբ՝ եռաբաղադրիչ /:
Օրինակ՝ վերին աստիճանի, ծայր աստիճան, ամենից առաջ, ժամ առաջ, մեծ մասամբ, չափից ավելի, մի կերպ, օր օրի վրա, առաջին հայացքից և այլն:

Շատ են նախադրական կազմությամբ մակբայները / **ընդ, ի, ըստ, առ** /՝ *օրըստօրէ, մերթընդմերթ, ժամանակ առ ժամանակ, ի սպառ:*

Կան մի շարք մակբայներ, որոնք ունեն գրության տարբերակներ. Դեսուդեն – դես ու դեն, մեկառմեկ – մեկ առ մեկ, դեմհանդիման – դեմ հանդիման:

Գլուխ 3
Մակբայի ուսուցումը

Ութերորդ դասարանում մակբայն ուսուցանելիս ամենից առաջ հասկացություն ենք տալիս այդ խոսքի մասի ընդհանուր իմաստի մասին, այլ կերպ՝ նշում, որ մակբայը թեև ունի նյութական բովանդակություն, սակայն մտնում է չթեքվող խոսքի մասերի համակարգի մեջ և խոսքիմասային առանձնահատկությունն այն է, որ ցույց է տալիս գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ: Ակամա կարող է հարց ծագել՝ չէ՞ որ հատկանիշ ցույց են տալիս նաև ածականները, դերանունները, թվականները, գոյականի որոշ հոլովաձևերը; Մինչդեռ, խորանալով մակբայի էության մեջ, նկատում ենք, որ այն էապես տարբերվում է մյուս խոսքի մասերից: Ահա այս տարբերությունը հանգամանորեն բացատրում եմ գրատախտակին գրված զուգադիր օրինակների հիման վրա:

Մեծ	Մեծանալ	Տարեցտարի
Հմուտ	Հմտանալ	Չափազանց
Աշխույժ	Աշխուժանալ	Արագ
Կարմիր	Կարմրել	Դեմառդեմ
գեղեցիկ	գեղեցկանալ	Հիմա

Այնուհետև համեմատության և հակադրության հնարքի կիրառման միջոցով բացատրում եմ, որ առարկայի հատկանիշ արտահայտելու բնույթով զուգադիր բառերից երրորդները՝ մակբայները, տարբերվում են և՛ ածականներից, և՛ բայերից:

Մակբայի միջառարկայական կապերը բացահայտելու համար պահանջում եմ հարց տալ զուգադիր շարքի յուրաքանչյուր բառին.
ո՞ր, ինչպիսի՞- մեծ, հմուտ,
ի՞նչ անել- մեծանալ, հմտանալ,
ինչպե՞ս- արագ, ե՞րբ- հիմա, որտե՞ղ -դեմառդեմ, որքա՞ն- չափազանց:

Ի մի բերելով այդ հարցերը՝ ուսուցիչն անպայման պիտի ընդգծի չորս կարևոր հանգամանք.

Ա. Մակբայ նշանակում է «բայի վրա դրվող»:

Բ. Մակբայները ցույց ենտալիս գործողության հատկանիշ կամ էլ հատկանիշի հատկանիշ:

Գ. Մակբայները զուրկ են թեքման ձևերից, չեն հոլովվում:

Դ. Կազմվում են նաև ածականների, թվականների, նաև մակբայների կրկնությամբ /հպարտ- հպարտ, չորս- չորս, բառ առ բառ, շուտ- շուտ/:

Ամփոփիչ դասի ժամանակ արդեն աշակերտները աշխատում են խմբերով՝ թեման



ամփոփելով գծապատկերներով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով մեր հետազոտության թեման՝ եկա հետևյալ եզրակացության.

. Ցանկալի արդյունք ապահովելու համար յուրաքանչյուր դասին ուսուցիչը նախապատրաստվի՝ ընտրելով գործադրվող մեթոդները, հնարները, վարժությունները:

. Դասը պլանավորելիս պետք է որպես ելակետ ընդունել նաև ավանդական մեթոդները՝ դրանք զուգորդելով ժամանակակից ակտիվ մեթոդներով և հնարներով:

. Արդյունավետ և հիմնավոր ուսուցման համար ցանկալի է կիրառել և՛ ավանդական, և՛ ժամանակակից մեթոդները:

. Հիմնական դպրոցի բարձր դասարաններում կարելի է ավելի շատ կիրառել ժամանակակից մեթոդները՝ քննարկումներով և վերլուծություններով:

. Տեսազննական մեթոդներ գործադրելիս նախընտրելի է կիրառել ժամանակակից մեթոդները:

. Առաջարկում ենք նաև կիրառել համացանցում տեղադրված ժամանակակից մեթոդները՝ մանավանդ ԿՏԱԿ-ի և ԿԳՄՄՆ-ի կողմից երաշխավորվածները:

Գրականության ցանկ

1.Հովի. Բարսեղյան, Փ.Մեյթիխանյան, Հայոց լեզու-8, Երևան, 2022, «Աստղիկ» գրատուն. Հրատարակչություն :

2.Ս.Սրուխանյան, Ա. Դալլաքյան, Ն.Դիշաղաջյան, Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ Լոռու մասնաճյուղ, 2008 «Վանատուր» ՍՊԸ տպարան :

3.Մ.Ասատրյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2002:

4. Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան, Ձևաբանություն, Երևան 2008, «Տաթև» գիտական համալիր, Դպրոցական մատենաշար:

5.Ա. Ե. Տեր- Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, «Լույս» հրատարակչություն:

6. Փ.Մեյթիխանյան, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011, «Աստղիկ» գրատուն:

7. ՀՀ ԿԳՆ ԿԱԻ «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական հանդես, Երևան, 2017, թիվ 1, էջեր 39-45:

8. ՀՀ ԿԳՆ կրթության բարեփոխումների կենտրոն, «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական ամսագիր, Երևան 2003 թիվ 2-3, էջեր 85-91:

9. Ն. Վիրաբյան, Լ.Սարգսյան, Հայոց լեզվի ուսուցման գծակարգեր և աղյուսակներ, Երևան 2007, «Զանգակ» հրատարակչություն: